«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 8

22.04.2021թ.

1.1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգի հաստատում:

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգը:

1.2. Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում էլեկտրոնային թեստավորման քննությունների իրականացման կանոնակարգի հաստատում:

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում էլեկտրոնային թեստավորման քննությունների իրականացման կանոնակարգը:

2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի բակալավրի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգի ուսանողների, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի վճարովի համակարգում ուսումնառողների համար 2021-2022 ուս. տարում՝ ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կուրսերի, ուսման վարձավճարի չափերի հաստատում:

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի բակալավրի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգի ուսանողների, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի վճարովի համակարգում ուսումնառողների համար 2021-2022 ուս. տարում՝ ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կուրսերի, ուսման վարձավճարի չափերը (փաստաթուղթը կցվում է):

3. ՀԱԱՀ ագրոնոմիական ֆակուլտետի կողմից ներկայացված «Հայոց լեզուն գործնականում» վերնագրով գործնական աշխատանքների ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

Ագրոնոմիական ֆակուլտետի կողմից ներկայացված «Հայոց լեզուն գործնականում» վերնագրով գործնական աշխատանքների ձեռնարկը երաշխավորել տպագրության (հեղինակ՝ Մկրտումյան Ա.Ա.):

4. ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ասպիրանտ Անուշիկ Պարգևի Տոնապետյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

1. ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ասպիրանտ Անուշիկ Պարգևի Տոնապետյանի ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի մշակում և պարամետրերի հիմնավորում» անվանումով՝ Ե.20.01 - «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ:

2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների դոկտոր, դոցենտ Արթուր Ռազմիկի Մինասյանին:

5. ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Պապինյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավարի փոփոխության հարցը:

Մարգարիտա Գևորգի Պապինյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մյասնիկի Եսոյանին՝ թեման թողնելով անփոփոխ՝ «Ավտոմոբիլի գազամոտորային վառելիքի շահագործական ծախսի նորմավորումը ըստ շարժման ռեժիմների», Ե.05.01 - «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ